Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Մեծամոր 26 դեկտեմբերի 2023թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/23» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ճնշումային հրշեջ ճկափողի ձեռքբերման նպատակով սույն թվականի նոյեմբերի 30-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/23» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐՄԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ն:

Համաձայն ներկայացված գնային առաջարկների «ԱՐՄԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը, սակայն հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ ներկայացված հայտում առկա են որոշակի անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

1. հրավերով սահմանված РПМ(П)-50-1,6-Т-УХЛ1 (ջերմակայուն) տեսակի ճկախողովակի փոխարեն առաջարկել է РПМ(П)-50-1,6-М-УХЛ1 (յուղակայուն) տեսակի ճկախողովակ,
2. առաջարկել է առանց գլխիկների կամ միացման համակարգերի ճկախողովակ, սակայն հրավերով սահմանված է եղել, որ ճկափողի ծայրամասերում լինի ամրացված ГР-50ал ГОСТ 28352-89 կամ համարժեք միացման համակարգեր:

Սույն թվականի դեկտեմբերի 18-ին՝ համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվել է կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը, որի մասին «ԱՐՄԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ին ծանուցվել է Արմեփս գնումների համակարգի, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

«ԱՐՄԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամանակահատվածում թվարկված անհամապատասխանությունների շտկում չի կատարվել, որի արդյունքում, համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի, գնահատող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 2 որոշմամբ այս ընկերության հայտը մերժվել է՝ գնահատվելով հրավերի պահանջներին անհամապատասխան, անբավարար:

«ԱՐՄԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է նաև ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետի պահանջը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերությամբ՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԱՐՄԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «ԱՐՄԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**